ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12 (5)
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
20.12.2024Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքներին ներկա են ավագանու 24 անդամները, բացակայում են՝ Չարենցավան համայնքի ղեկավար Հակոբ Շահգալդյանը, Գառնիկ Սահակյանը և Անահիտ Խեչոյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Գ.Գրիգորյանը, համայնքի ղեկավար օգնական Ե.Սահակյանը, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Գ.Աֆյանը, Ս.Բալաբեկյանը, Ա.Ծերունյանը, գյուղերի վարչական ղեկավարները:

Աշխատակազմի քարտուղար Սուրեն Մուրադյանը ողջունեց ներկաներին և տեղեկացրեց, քանի որ համայնքի ղեկավար Հակոբ Շահգալդյանը այս պահին մասնակցում է մարզխորհրդի նիստին, ավագանու այսօրվա նիստը կվարի Չարենցավան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Սևակ Վարդանյանը:

<u>Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան</u>

Ձեզ եմ ներկայացնում Չարենցավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական թիվ 5 նիստի օրակարգի նախագիծը՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների դրույթներով. ***առաջարկում եմ***

1. Հաստատել Չարենցավան համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական թիվ 5 նիստի օրակարգը՝

1) Չարենցավան համայնքում տեղական տուրքերի 2025 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:
2) Չարենցավան համայնքում տեղական վճարների 2025 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

Արտաքին տեսքը ոչ մի տեղ չ հայտնի կարմիր հանձնում է
Հանձնաժողովի Արշակ
Ֆինանսատնտեսական Հանձնաժողովի

3) Չարենցավանի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:
4) Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2025 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
5) Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
6) Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին:
7) Չարենցավան համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:
8) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
9) Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:
10) Չարենցավան համայնքի 2025 թվականի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին:
11) Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
12) Սեփականության իրավունքով «Պիոն» ՍՊԸ-ին պատկանող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
13) «Լիթոս» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Կարենիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող Գյումուշի լիթուդային ավազների հանքավայրի տարածքում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին:
14) «Խառնարան» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Կարենիսի լիթուդային պեմզայի հանքավայրի կենտրոնական տեղամասի հանքի փակման ծրագրին համաձայնություն տալու մասին:
15) «Սեվքն քոմփանի» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Կարենիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող Լուսավանի լիթուդային պեմզայի հանքավայրում արդյունահանման աշխատանքների իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին:
16) «Սիրեկան» ԱԿ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Կարենիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող Կարենիսի լիթուդային պեմզայի հանքավայրում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին:

<u>Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան</u>

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը՝ օրակարգային հարցերի վերաբերյալ:

Կողմ- 14 դեմ - 0 ձեռնպահ -10

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Չարենցավան համայնքում տեղական տուրքերի 2025 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

/Զեկ.Վ.Բարսամյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 9-րդ, 11-րդ և 12-րդ հոդվածներով, ***առաջարկում եմ.***

1. Սահմանել ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում (այսուհետ՝ Չարենցավան) տեղական տուրքերի 2025 թվականի հետևյալ դրույքաչափերը համաձայն ***հավելվածի***:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 24 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2. Չարենցավան համայնքում տեղական վճարների 2025 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ և 20-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 10-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 8-րդ հոդվածով, 14-րդ հոդվածի 1-ին մասով և 19-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով, ***առաջարկում եմ.***

Սահմանել Չարենցավան համայնքում տեղական վճարների 2025 թվականի հետևյալ դրույքաչափերը՝

1) Չարենցավան համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ - 10000 / տաս հազար/ դրամ:

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ - 10000 / տաս հազար/ դրամ:

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ - 10000 / տաս հազար/ դրամ:

4) Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ - 10000 / տաս հազար/ դրամ:

5) Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ յուրաքանչյուր մասնակցի համար՝ 10000 /տաս հազար/ դրամ.

6) Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ յուրաքանչյուր մասնակցի համար՝ օրական 200 /երկու հարյուր/ դրամ.

7) Չարենցավան համայնքի վարչական տարածքում կենցաղային աղբի հեռացման աշխատանքների իրականացման, աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվառման ու գանձման 2025 թվականի դրույքաչափեր սահմանել համաձայն ***հավելված 1-ի:***

8) 2025 թվականի իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար աղբահանության տեղական վճարի դրույքաչափերը ըստ խմբերի սահմանել համաձայն ***հավելված 2-ի:***

9) Ջրմուղ-կոյուղու ջրամատակարարման ծառայությունների համար՝ որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերտոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, սահմանել վճար՝

ա) Ֆիզիկական անձանց համար՝ յուրաքանչյուր բնակչի համար 100 դրամ:

բ) Իրավաբանական անձանց համար՝ համաձայն հաշվիչի ցուցմունքի, 1խմ -ի համար 150 դրամ:

10) Չարենցավան համայնքի արտադպրոցական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում ծնողական վարձավճարները սահմանել համաձայն ***հավելված 3-ի:***

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 24 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Զարենցավանի համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի դրույթներով, ***առաջարկում եմ.***

1. Համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել ամսական 460000 ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 23 դեմ- 0 ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. Զարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2025 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 6 –րդ և 7-րդ կետերի դրույթներով, ***առաջարկում եմ.***

1. Հաստատել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2025 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 24 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

/Զեկ. Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասին 7-րդ կետի դրույթներով, ***առաջարկում եմ.***

1. Հաստատել Չարենցավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելված NN 1-15-ի :
2. Սույն որոշման NN 1-15-ը հավելվածներն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 01-ից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Աշխատակազմի քարտուղար Սուրեն Մուրադյանը ներկայացրեց, որ թվով 13 արտադպրոցական և նախադպրոցական ՀՈԱԿ-ների, «Քաղաքային գրադարան»-ի աշխատակիցների աշխատավարձը բարձրացվել է 10%-ով, իսկ «Մշակույթ» ՀՈԱԿ-ի աշխատավարձը՝ 15%-ով: Նշվեց նաև «Մշակույթ» ՀՈԱԿ-ում գերեզմանատան վերակացույի հաստիքային 2 միավորի կրճատման, մեկ հաստիքային միավոր էլեկտրոմոնտյոր-վարպետի ավելացման, «Հեքիաթ» մսուր մանկապարտեզում՝ մեկ հաստիքային միավոր օժանդակ բանվորի, իսկ «Զանգակ» մսուր մանկապարտեզում՝ մեկ հաստիքային միավոր խոհարարի օգնականի և 0.5 հաստիքային միավոր դռնապանի հաստիքներ ավելացնելու մասին:

Բուռն աշխատանքային քննարկում ծավալվեց «Մշակույթ» ՀՈԱԿ-ում գերեզմանափորերի աշխատավարձը վերանայելու և բարձրացնելու շուրջ:

<u>Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 24 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Լսեցին.

6. Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի, ***առաջարկում եմ.***

1. Հաստատել Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեն (հավելված 1, 2, 3, 6).
   1) եկամուտների գծով՝ 2035000.0 հազ. դրամ,
   2) ծախսերի գծով՝ 2035000.0 հազ. դրամ,
   ա. հաստատել համայնքի բյուջեի եկամուտները՝ համաձայն հավելված 1-ի:
   բ. հաստատել համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հավելված 2-ի:

գ. հաստատել համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 3-ի:
դ. հաստատել համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական և գործառնական դասակարգման համաձայն հավելված 6-ի:

2. Սահմանել, որ՝
   1) ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի ֆինանսավորման առաջնահերթությունները և համամասնությունները:
   2) ծախսերի տնտեսագիտական և գործառնական դասակարգմամբ նախատեսված հոդվածների միջև «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին համապատասխան՝ համայնքի ղեկավարի կողմից կատարվող վերաբաշխումները հոդվածների միջև չեն կարող գերազանցել հաստատված ծավալի 15%-ը:
3. Ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը կատարել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների համաձայն:
4. 2024 թվականի բյուջետային տարվա ընթացքում ապրանքների ծառայությունների և այլ ծախսերի գծով առաջացած պարտավորություններին անդրադառնալ պարտավորությունների գույքագրում կատարելուց հետո:

5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2025թ. հունվարի 1-ից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Ավագանու անդամ Նարեկ Բաբայանի հարցերին կապված համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների պարգևավճարների հետ, պատասխաններ և պարզաբանումներ հնչեցին Ս.Վարդանյանի, Ս.Մուրադյանի և Գ.Աֆյանի կողմից:

<u>Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 14 դեմ-10 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Լսեցին.

6. Չարենցավան համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1-րդ հոդվածի, ***առաջարկում եմ.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածների:
2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են միջնաժամկետ (ՄԺԾԾ երեք տարվա կտրվածքով) կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլում են համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն՝ ըստ գործառնական ոլորտների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 24 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

7. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդված 4-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներով, ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 104-Ն որոշման հավելվածի N 1-6 հատվածներում կատարել փոփոխություններ՝

Տողի N	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը	Բյուջեի ավելացում		Ընդամենը
				Վարչ. մաս	Ֆոնդ. մաս	
1	2	3	4	5	6	7
	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողերի համար	7131	24500,0	-15000,0	0	9500,0

2. Թույլատրել գնումները կատարել Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 24 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Լսեցին.

9. Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին :

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 90-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, ***առաջարկում եմ.***

1. ***ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ 1900.0 ՀԱԶ. ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼ՝***

Բաժին	խումբ	Դաս	Ծրագրի անվանումը	Հոդվածի NN	Ընդամենը	Բյուջեի ավելացում		Ընդամենը
						Վարչ. մաս	Ֆոնդ. մաս	
01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ / այլ դասերին չպատկանող/	4657	2910,7	600,0	0	3510,7
10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/	4729	25000,0	1300,0	0	26300,0
11	1	2	Պահուստային ֆոնդ	4891	144827,655	-16900,0	0	127927,655

2. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 24 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Լսեցին.

10. Չարենցավան համայնքի 2025 թվականի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին

/Զեկ.Վ.Չիլինգարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով, ***առաջարկում եմ.***

1. Հաստատել Չարենցավան համայնքի 2025 թվականի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման համաձայն հավելված N N 1,2 ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 23 դեմ-0 ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Լսեցին.

11. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

/Զեկ.Ա.Զաքարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 5-րդ թաղամասի 11-րդ շենքի 46-րդ բնակարանի բնակիչ Նելլա Սաֆարյանի 2024 թվականի դեկտեմբերի 03-ի թիվ 5691-16, Չարենցավան քաղաքի 4-րդ թաղամասի 23-րդ շենքի 8-րդ բնակարանի բնակիչ Ալվարդ Մկրտչյանի 2024 թվականի դեկտեմբերի 06-ի թիվ 5724-16, Չարենցավան քաղաքի 2-րդ թաղամասի 9-րդ շենքի 29-րդ բնակարանի բնակիչ Գյուլվարդ Օրբելյանի 2024 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 5811-16, Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի 38-րդ շենքի 10-րդ բնակարանի բնակիչ Հայկուհի Մկրտչյանի 2024 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 5812-16 և Չարենցավան համայնքի Բջնի գյուղի 12-րդ փողոցի 36 տան բնակիչ՝ Համեստ Խաչատրյանի 2024 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 5874-16 դիմումները ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին, ***առաջարկում եմ.***

1. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել ***Ալվարդ Թևոսի Մկրտչյանին:***

2. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել ***Նելլա Համազասպի Սաֆարյանին:***
3. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել ***Գյուլվարդ Խաչիկի Օրբելյանին:***
4. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 200.0 հազ. դրամ հատկացնել ***Հայկուհի Մաքսիմի Մկրտչյանին:***
5. Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 150.0 հազ. դրամ հատկացնել ***Համեստ Մարտիկի Խաչատրյանին:***

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 24 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

12. Սեփականության իրավունքով «Պիոն» ՍՊԸ-ին պատկանող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

/Զեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 10-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով «Պիոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հայտերը. ***առաջարկում եմ.***

1. Սեփականության իրավունքով «Պիոն» ՍՊԸ-ին պատկանող 07-008-0282-0190 ծածկագրով 2.9655 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակության փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողատեսքի:
2. Սեփականության իրավունքով «Պիոն» ՍՊԸ-ին պատկանող 07-008-0282-0191 ծածկագրով 2.5249 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակության փոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական հողատեսքի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 24 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Լսեցին.

13. «Լիթոս» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Կարենիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող Գյումուշի լիթուդային ավազների հանքավայրի տարածքում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին:

/ՀԵԿ.Ս.Բալաբեկյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 28-րդ կետի, ***առաջարկում եմ.***

1. Տալ նախնական համաձայնություն «Լիթոս» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Կարենիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող Գյումուշի լիթուդային ավազների հանքավայրի տարածքում օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների իրականացման գործընթացին:
2. Սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունն ու տեսագրությունը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 24 դեմ- 0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Լսեցին.

14.«Խառնարան» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Կարենիսի լիթուդային պեմզայի հանքավայրի կենտրոնական տեղամասի հանքի փակման ծրագրին համաձայնություն տալու մասին:

/Զեկ.Ս.Բալաբեկյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 28-րդ կետի, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 58.1 հոդվածի՝ ***առաջարկում եմ.***

1. Տալ նախնական համաձայնություն «Խառնարան» ՍՊԸ-ի նախաձեռնությամբ ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Կարենիս բնակավայրի Կարենիսի լիթուդային պեմզայի հանքավայրի Կենտրոնական տեղամասի հանքի փակման ծրագրին:

2. Սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունն ու տեսագրությունը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 24 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Լսեցին.

15. Սեվքն քոմփանի» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Կարենիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող Լուսավանի լիթուդային պեմզայի հանքավայրում արդյունահանման աշխատանքների իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին:

/Զեկ.Ս.Բալաբեկյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 28-րդ կետի, ***առաջարկում եմ.***

1. Տալ նախնական համաձայնություն «Սեվքն քոմփանի» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Կարենիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող Լուսավանի լիթուդային պեմզայի հանքավայրում արդյունահանման աշխատանքների իրականացման գործընթացին:

2. Սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունն ու տեսագրությունը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 24 դեմ- 0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

16.«Սիրեկան» ԱԿ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Կարենիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող Կարենիսի լիթուդային պեմզայի հանքավայրում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին:

/Զեկ.Ս.Բալաբեկյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 28-րդ կետի, ***առաջարկում եմ.***

1. Տալ նախնական համաձայնություն «Սիրեկան» ԱԿ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Կարենիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող Գյումուշի լիթուդային պեմզաների հանքավայրում երկրաբանական աշխատանքների իրականացման գործընթացին:
2. Սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունն ու տեսագրությունը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-24 դեմ- 0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/

Չարենցավան համայնքի ավագանու անդամներ՝

Առաքելյան Նորայր

Բաբայան Արայիկ

Բաբայան Նարեկ

Բաղդասարյան Սահակ

Գալստյան Արթուր

Գևորգյան Գևորգ

Դավթյան Կարեն

Եփրեմյան Բաբկեն

Եփրեմյան Տարոն

Թադևոսյան Նունե

Խաչատրյան Արշակ

Հարոյան Լիլիթ

Ղամբարյան Գարիկ

Մալխասյան Նորիկ

Մակինյան Վարդան

Մուքայելյան Վալերի

Պապոյան Դավիթ

Պալյան Գարիկ

Պետրոսյան Ավետիք

Պողոսյան Մնացական

Վարդանյան Նորիկ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ